

ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇ

Շրջանակի մեջ վերցրու 1 – 10-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանները:

1) Գտի՛ր այն հնգանիշ թիվը, որի հարյուրավորը 5 է, միավորը 4, իսկ մնացած կարգերում գրված է 7:

- 1) 77475
- 2) 77574
- 3) 75774
- 4) 74775

2) Որքանո՞վ կմեծանա երկնիշ թիվը, եթե նրա գրությանը ձախից կցագրենք 5 թվանշանը:

- 1) 5-ով
- 2) 50-ով
- 3) 500-ով
- 4) 5000-ով

3) Ընտրի՛ր տրված թվերից այն թիվը, որը 6-ի հնգապատիկից մեծ է 10-ով:

- 1) 21
- 2) 40
- 3) 56
- 4) 60

4) Ընտրի՛ր տրված թվանշաններից այն թվանշանը, որը տեղադրելով աստղանիշի փոխարեն՝ կստանաս անհավասարություն. $7 \text{ կմ } 50 \text{ մ} > 7 \text{ կմ} * 1 \text{ մ}$

- 1) 4
- 2) 5
- 3) 6
- 4) 7

5) Ընտրի՛ր այն շարքը, որտեղ թվերը դասավորված են նվազման կարգով:

- 1) 2466, 5159, 78427, 62436
- 2) 2466, 5159, 62436, 78427
- 3) 78427, 62436, 2466, 5159
- 4) 78427, 62436, 5159, 2466

6

Անին գնեց 800 գ պանիր: Նա պիցայի համար օգտագործեց այդ պանրի $\frac{1}{4}$ մասը:
Քանի՞ գրամ պանիր նա օգտագործեց:

- 1) 100 գ
- 2) 200 գ
- 3) 400 գ
- 4) 600 գ

7

Ընտրի՛ր այն պատասխանը, որն արտահայտում է 5 կգ 7 գ -ը գրամներով:

- 1) 507 գ
- 2) 5700 գ
- 3) 5070 գ
- 4) 5007 գ

8

Ընտրի՛ր այն պատասխանը, որն արտահայտում է 5 ժ 42 ր-ն րոպեներով:

- 1) 542 ր
- 2) 292 ր
- 3) 342 ր
- 4) 162 ր

9

Քառակուսու երկու կողմերի երկարությունների գումարը հավասար է 28 սմ:
Գտի՛ր քառակուսու պարագիծը: Նշի՛ր ճիշտ պատասխանը:

- 1) 14 սմ
- 2) 56 սմ
- 3) 112 սմ
- 4) 196 սմ

10


Նշի՛ր այն գծապատկերը, որի $\frac{5}{8}$ մասը ներկված է:



1)



2)



3)



4)

11- 15-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը գրիր յուրաքանչյուր առաջադրանքից հետո նշված տեղում:

11 Հաշվի՛ր բեկյալի երկարությունը, եթե նրա կողմերի երկարությունները 15 սմ, 27 սմ, 35 սմ և 43 սմ են:

Պատ.՝.....

12 Հաշվի՛ր բոլոր այն երկնիշ թվերի գումարը, որոնց միավորը 2 է:

Պատ.՝.....

13 Դի՛ր փակագծերն այնպես, որ ստացվի հավասարություն:

$$3200 : 40 + 20 \cdot 8 = 800$$

14 Հաշվի՛ր $2536 + 45 \cdot (48240 : 80 - 503)$ արտահայտության արժեքը:

Պատ.՝.....

15 Կռահի՛ր օրինաչափությունը և տրված թվերից հետո ավելացրո՛ւ ևս մեկ թիվ:

1, 5, 10, 16, :

16-17-րդ առաջադրանքների լուծման ամբողջ ընթացքը մանրամասն ու հիմնավորված ներկայացրու առաջադրանքներից հետո նշված տեղում:

16 Ուղղանկյան լայնությունը 45 մ է, որը կազմում է երկարության $\frac{1}{3}$ մասը: Գտի՛ր ուղղանկյան մակերեսը:

Պատ.՝.....

17 Գնացքը երկու օրում միևնույն արագությամբ անցավ 1800 կմ ճանապարհ: Առաջին օրը նա ճանապարհի վրա ծախսեց 12 ժամ, իսկ երկրորդ օրը՝ 4 ժամ պակաս: Որքա՞ն ճանապարհ նա անցավ առաջին օրը: